

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, ԹԷ ԽՈՐԻՆ?

Սորանով արձարծուելիք սոյն պատմագիտական խնդիրը՝ յանձին մեր անմահ պատմահօր՝ Արշարունեայ և Բագրևանդայ եպիսկոպոս՝ Մովսէս փիլիսոփայ Քերթովահայր—**«ԽԱՐԵՆԱՅԻ ԹԷ ԽՈՐԻՆ»**—կոչնանուան, անկասկած փոքր բարդ հարց չէ, և կարօտ է լուրջ քննադատութեան, իսկ թէ որքան կյաջողութի իմովսանն ակարութեան լուսաբանելու այդ՝ դարերից ի վեր մուտ գործած՝ և մինչ իսկ պատմութեան բաժին դարձած, և միաժամանակ ժողովրդական բնոյթ ստացած, թիւրիմացական պատահականութիւնը, —չգիտեմ:

Ակներև է, պատմահօր—**«ԽԱՐԵՆԱՅԻ»**—կոչուելը վաղուց անտի կապուած է Տարօնում գտնուած՝ պատմական անուն կրող—**«ԽՈՐԻՆ»** գիւղանուան հետ, որն ուրիշ այլ տաան և մէկ գիւղերի հետ վաղուց հետէ համարոււմ էր սեպհականութիւն Վահէվահանն մեննականն բազիններին:

Լուսաւորին՝ իւր Կեսարիայից հանդիսաւոր վերադարձին մեծ դժուարութեամբ հիմն ի վեր կործանելով Վահէվահանն մայր մեննականներն՝ և ամբողջելով մեննատեղերում՝ իւր հետ բերած Յովհաննու—Մկրտչի սուրբ նշխարները՝ կանգնոււմ է այնտեղ քրիստոնէական տաճար՝—**«ԻՃՃԱԿԷԱՆ Ս. ԿԱՐԱՊԷՏ»**—անունով, հրամայոււմ է նոյնութեամբ թողնելու որպէս սեպհականութիւն Իննական վանուց ի վեր այսր յիշատակուած տաան և երկու գիւղերն, որոց մէջ էր և —**«ԽՈՐԻՆ»**—(տես Զննոր գլակ):

Իննական հռչակաւոր վանքը յայտնի է **«ՄԵՍԷ ՍԱԼԻՐԱՆ —ՄԱՐԿԱՊԵՏՈՒ Ս. ԿԱՐԱՊԷՏ»**—անունով՝ ըստ ժողովրդականին:

Այժմ դառնանք —**«ԽԱՐԵՆԱՅԻ»** կոչնանուան բացատրութեան:

Ո՞ւմ արդեօք յայտնի չէ, որ մեր հին եկեղեցական մատենագրների և գրողների մեծագոյն մասն ըստ տեղային տիրող սովորութեան յայտնի են ոչ այնքան ազգանուանական յորջորջումներով, որքան ծննդավայրերի, զոր օրինակ—Եղնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Մատթէոս Ուռայեցի, Անանիա Շիրակեցի, Սամուէլ Անեցի, Մովսէս Կաղանկատուացի, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Լամբրոնացի, Օհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Կիրակոս Գանձակեցի, Կոստանդին Երզնկացի, Յովհաննէս Թլկրանցի...:

Նոյնպէս՝ ի հկատի պէտք է առած, որ բազմիցս, և զրեւ թէ սովորաբար, արձարծուել և արձարծոււմ են որպէս մատենագրներն, այնպէս և ականաւոր անձինք միայն եւ թէ ծննդավայրերի անուններով, զոր օրինակ, Կողբացի, Փարպեցի, Կլայեցի, Լամբրոնացի, Աշտարակեցի...:

Ինչ թուում է, թէ այս սովորութիւնը հարկադրել է մերոնց և զրդել նրանց ազգայնական նախանձը, մեծ պատմահօրն ևս անուանած լինելու որ և է մի տեղացի ի չարս այլ մատենագրների, որպիսի անմեղ, սակայն անխորհուրդ ցանկութեան մեծ զուգադիպութեամբ ոչ փոքր նպաստել է պատահական նմանաձայնութիւնը — «Խօրին» ի և «Խօրնի», և այսպէս «Խօրին» նշանակալից բառը հետզհետէ վերածուել է «Խօրնեցու», ապա և «Խօրնեացու»:

Իսկ վերջերումս էլ՝ Մխիթարեան ուխտի միաբանութեան ռաւոյնատենչ հայերն՝ ի նկատի ունենալով, որ բաւականին անհեթեթ է «Խօրնի» գիւղանունից համարելն «Խօրնեացի» կոչնանունան ծագումն, ի դէպ բարեսրտաբար «Խօրնին» վերածել են «Խօրոնի» ի, որպէս զի աւելի հարթուած լինի «Խօրնեացի» անունն յերբրական ծագումն և մտացածին բացատրութիւնը: Ըստ իս «Խօրին» մի գիտական տիտղոս է, որով պսակուած էր Մովսէսը իւր նոյնանման — նոյնաժամանակ փառքով պսակուած՝ ի մի սիրտ և մի հոգի համակուած ընկեր Անյաղթի հետ, որոնք թերևս արժանապէս պսակուած էին Հեղինական աշխարհից՝ «Դաւիթ անյաղթ, Մովսէս Խօրին» անուններով:

Նոյնպէս չէ պէտք աչքաթող անել և չ'ընշտել, որ սովորաբար ծննդավայրերի անուններով են կոչուել՝ մեր մատենագրներից միջին և կրտսեր դասակարգի պատկանողներն, որոնց և յականէ յանունէ յիշատակեցինք, իսկ բարձրագիւր անձերից, լինին նրանք թագաւոր, հայրապետ, իշխան՝ վերակոչուել են իրանց առանձնաշնորհ ձիւղերի և հանրաշահ ծառայութիւնների համապատշաճ, որոշիչ տիտղոսով, և ոչ երբէք ծննդավայրի. — օրինակ և կեղեցականներից՝ Նախկին Լուսաւորիչներ Թագէոս և Բարդուղիմէոս, Բ. Լուսաւորիչ Սուրբ Գրիգոր, Շնորհալին Ներսէս, Պարթև-Սահակը, Մամբրէ Վերժանող, Օհան Իմաստասէր. Մեծ Ներսէս. իսկ թագաւորներից՝ Տիգրան Մեծ, Արտաշէս Աշխարհակալ, Առաջին Պսակաւոր Պարոյր, որպէս և Նախահաւատ Արգար, քաջ Վարդան, — կարմիր Վարդան, Աշոտ Երկաթ, Աշոտ Ողորմած..., այսպէս և բանասիրութեանս հերոս Մովսէսը, որպէս ասացինք, իւր խորին գիտական մակացութեան ազագու՝ «Մովսէս Խօրին», որպէս և իւր լծակից անբաժան ընկերը՝ «Դաւիթ» — Դաւիթ անյաղթ, Մամբրէ վերժանող, իրանց քաջ ճարտարարան մակացութեան ազագու, որոնք եղել են և կ'մնան՝ որպէս անչիջանելի լաոյտերներ հայ գրականութեան փառքի և պարծանքի:

Խնդիրն առաւել ի մօտոյ չօշափած լինելու ցանկութեամբ, կասկեք, որ «Խօրին» բառը որպէս բնորոշ արտայայտիչ շատահանձար, խորագոյն գիտութեան՝ առօրեայ գործածութեան մէջ է

և զիս և առաւել՝ հնուէն յանձին խորիմաստ անձնաւորութեան թէ ըստ մտաւորին և թէ ըստ արուեստականին և առհասարակ, զոր օրինակ—«Խօրին մարդ, խօրին գիւօւրիւն, խօրախօրեւորդ զօրծ, խօրին համագմայն...», օրպէս և խօրեւորդ խօրին, ասացուածք խօրին, բանք խօրին, զօրծք խօրին...:

Հաս իս առանց երկգայելու Մովսէսն ոչ թէ Խօրենացի է, այլ Խօրին:

Սակայն մենք մեր ցարդ տուած ենթադրութիւններից պատմա՞օր ոչ «Խօրենացի» լինելութեան՝ զեռ ունենք աւելի համոզեցուցիչ փաստեր՝ իւր իսկ պատմա՞օրից, և ես նախ կրեմք կրկնակի յիշատակութիւններ իրենից, որ նա ոչ միայն Տարօնեցի չէ, այլ այդ կողմերն, ինչպէս և Տարօնի սահմանակից նահանգ Վասպուրականն իւր աշխարհա՞ռչակ Տոսպ—Վան Շամիրակերտոյն, չէ տեսել անդամ, և ահաւասիկ:

«Հրամայեաց (Շամիրամ) նախ զամբարակ զեօսյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել...», այժմ, օրպէս լսեմք, մարդիկ աօխարհին ի եէն և ի զաղբակաց փախսեամբ ամբանան...: Իսկ զծայր բաղա՞փն և օր ինչ ի նմանէ զօրծոյ հրօտակերօւրիւնք, բազմաց ի մօրդկացէ ոչ հասու լեալ. և ոչ պամել է կարօղութիւն... Որոյ օրպիսութիւն դուրեանն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հասեալ ձգմարտութեամբ յումեմէ, և ոչ մեմ ի պատմութիւնս եիւսել հաւանիմք, այլ տեսմք միայն, թէ ամենայն բազաւօրականաց զօրծոց, օրպէս լուսք, առաջին և վեհագոյն համարեալ...»: (Խօր. Ա. Գ. գլ. Ժ. 2):

Շատ պարզ է, որ եթէ տեսած լինէր այդ ոճով չէր զրի, որպէս ասում են, որպէս լսում ենք օրպէս լուսք, օրպէս տեսն»:

Այս բոլորը գալիս են ապացուցանելու, որ Մովսէսը Խօրին է և ոչ Խօրենացի. մեր կարծիքով նա Արարատցի է. այս մեր ենթադրութիւնը ապացուցանում են այն ոճերը, որ նա գործ է ածում իւր պատմութեան մէջ և այսօր էլ յեղչեղուում են արարատցոց բնրանում. Ահա օրինակներ՝ նրա ոճերից, դարձուածքներից, բանասերից, օրպիսիք ի մասնաւորի միայն յատուկ են և զիս և կան բնիկ Արարատցի զաւակի հոգուն և գրչին, և ոչ այլ աշխարհի կամ նահանգի, և ահա.—

ա) «Ո՛չ գիտելով զհամ պատերազմին Արեակայ...»: (Խ. Գ. Բ. գլ. Գ.):

Եւ այսօր իսկ յաճախ կպատահի ձեզ լսելու Արշարունցի ջնիկներիցս՝ սոյն ոճով և իմաստով բանասէն դարձուածքներ. — ախր

դու ինչ գիտես կուտի համը, էն մարդը, պիտի կուտի գուրս գայ, որ գիտի կուտի համը, դու միայն առել ես կարդալ—գրելու համը...

բ) Իսկ գ օ ռ ա լ ի ն Սրաթիսի միւս անգամ ընդ Պեճղաքի... (Խ. Գ. Բ. զլ. Թ):—Նրա գոռալուն ով կարող ա գիմանալ, որ գոռաց, աշխարհը կքանդի, ի սէր Աստուծոյ՝ նրան մի գոռադրէք մեր վերայ:

3. Ի մ ա ռ մ ա ն գ ա յ զ հ ա յ եւ բ օ ռ ա ռ ա ն ե ա յ յ .: (Խ. Գ. Բ. զլ. Զ.): Ինչ մարմանդ քաղու. քաղչէք ունէք. մարմանդ ջրերով, մարդ չի ուզում հեռանալ ձեր մարմանդ գնացող առուակ-ների կանաչ ափերից. ջրերը միայն մարմանդ չեն, մեր մարդիկն էլ շատ մարմանդ են... մարմանդ ձի, մարմանդ քամի...:

4. Զմարդադուարիւն ի բաց բնցել ինքեանց .. (Խ. Գ. Բ. զլ. Զ.) Էդ խաթաթիդ (բնոյթ) երբ ես դէն քցելու. դէն քցի. թող կորչի. թէ մի քանի տարի առաջ քցել էիր, հօ վազուց կարդին մարդ էիր. հեշտ ա քցելն, հօ լու չի. որ քցեմ վերայիցս...

5. Զամենցուն զօտսն եւ զգիւրդն յայսնելով .. (Խ. Գ. զլ. Ա.): Նրա ուսար-մուսար կարողացար իմանալ. Ո՞ւստ իմա-նամ. ինչպէս թէ ուստ իմանամ բա՛նա ուստ ա իմանում. ես ինչ գիտեմ, թէ ուստ ա իմանում...

6. Ա ռ ա կ ե լ ս ա կ օ կ արձուրեան ժամանակին... (Խ. Գ. Գ. զլ. Ա.): Կալ—կտից ատակուել էք. երբ ենք ատակուել, մեզ էդպէս հեշտ ատակուել կլինի. մենք հաղիւ մինչի՛ աշուն ատըկուենք...

7. Պարզեւել յ ա ն կ ա ծ է պատերազմին... (Խ. Գ. Բ. զլ. ԻԳ): Մի ասան, տեսնեմ, էս վերջին պատերազմի ընկածից ձեզ բաժին ընկաւ, թէ չէ.—օրհնած՝ մեզ ով կթողնէր ընկածին մօտենալու. է, փառք Աստուծ. ով ա ընկածի կարօտ. մենք ամենեկին ընկածի ետից չենք ընկել... Եւ այսպէս անվերջ օրինակներ. որ և դար-ձեալ կրկնում եմ, դալիս են աղաղութանելու, նորա—մեծ պատ-մահօր—Արարատեան աշխարհի բուն բնիկ զաւակ լինելը:


Բաւ, այս մտքի երկանց ծնունդն ես ինձ չեմ վերագրելու, այն եղել են և ուրիշ թերահաւատողներ, որ տարակուսանքով են վերաբերուել «Խառնացի» անուան բացատրութեան, բայց շատ աղօտ, և այլ ընդ այլոյ բացատրութիւններով, ոմանք եւ կարծիք են յայտնել, թէ նա արարատեան «Խառ դառ» ծնունդ լինելու ազա-գաւ է կոչուել «Խառնացի» այսինքն խոր դաշտեցի:

Թէ Արարատեան լայնածաւալ դաշտը բազմիցս խոր դաշտ է կոչուել մեր շատ մատենագրներից և նոյն իսկ Խորենացուց իրե-նից, այդ փաստ է. բայց թէ ինչ առնչութիւն կարող է լինել այդ

երկու տարրեր անունների մէջ, աղարէն առ շատ ու շատ թաղա-  
ւորների, իշխանագուհիների, հայրապետների, գրողների, մատենա-  
գրների... ծննդավայր է եղել բայց և ոչ մէկը նորանից երբէք **Խո-  
րենացի խոր դասեցի**։ Կէ կոչուել ցայսօր։

Քաջ համոզուած լինելով հանդերձ, որ արդարեւ բազմամեայ  
սովորութիւնը ի վերջոյ բնոյթի է փոխուում, և թերեւ դժուար  
**«Մովսէս Խորենացին՝ Մովսէս Խորինի փոխուի, սակայն  
միայն պատմական խոչոր և անյաջող թիւրիմացութիւնը փարա-  
տած լինելու յուսով՝ փորձեցինք մերովսանն լուսարանելու  
միջնազնած խնդիրը, հաւատալով միաժամանակ, որ անկարելի  
ոչինչ չկայ աշխարհում և ապագայում աւելի զօրաւոր փաստերով  
ապացոյցները կը դան հաստատելու մեր վարկումը»**։

**Սիօն վարդապետ.**



\*) (Տեա Յոյս շարժանքեր 1906 № 16 եւ Զարկ 1907 № 5)։